

Հաստատում եմ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ/ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ  
ՊՐՈՌԵԿՏՈՐ Է. Վ. ԱՍՐԻՅԱՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԵՊՀ ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ՝ 2025 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ  
ՆԻՍՏԻ ԹԻՎ 4 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ԼՍԵՑԻՆ. - Սոնա Կամոյի Ալավերդյանի «Շրջանակված արձակ» (frame story) հասկացությունը և նրա դրսևորումները ժամանակակից հայ արձակում (1985-2020 թթ.)» Ժ. 01. 02 («Նորագույն շրջանի հայ գրականություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին (Ընդունված է ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի 2025 թ. դեկտեմբերի 4-ին տեղի ունեցած նիստում, արձանագրություն թիվ 4: Նիստին ներկա էին՝ պրոֆ. պրոֆ. Վ.Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Արզումանյանը, Լ. Սեյրանյանը):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – պրոֆ. Ա. Ավագյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Արզումանյանը, Լ. Սեյրանյանը:

Նշվեց, որ Սոնա Ալավերդյանի աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում: Պաշտպանությունը կայանալու է ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում: Խորհուրդը այն կարծիքի է ուղարկել ԵՊՀ հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոն՝ որպես առաջատար կազմակերպության:

Նշվեց, որ ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից և ութ հավելվածներից: Ներածության մեջ շեշտադրվել են ուսումնասիրության առարկան, հարցի պատմությունն ու մշակվածության աստիճանը, հիմնավորվել են աշխատանքի կառուցվածքը, գիտական նորույթը, մեթոդական հիմքերը: Ալավերդյանը

առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքի երեք զլուխներում հիմնախնդիրը դիտարկել է տարաշերտ բացվածքներով: Ալավերդյանը հետաքրքիր դիտարկումներով քննաբանում է շրջանակված պատումի և հայ պոստմոդեռնիստական գրականության կապը՝ փորձելով գտնել պատմական, սոցիալ-քաղաքական և գրական գործոնները, որոնք նպաստել են Հայաստանում պոստմոդեռնիստական գրականության զարգացմանը: Ներկայացնելով շրջանակման երևույթի համաշխարհային պատմությունը, հանգամանորեն քննելով տարբեր հեղինակների տեսական դրույթները՝ նա ընդհանրական գծերով ներկայացնում է հնարանքի ծագման ու զարգացման հիմնական փուլերը, գործառական բնույթը: Հստակորեն որոշարկված են ուսումնասիրության արդիականությունը և նորույթը. շրջանակման հասկացությունը հայ գրականագիտության մեջ քննության առարկա է դառնում առաջին անգամ: Հանգամանորեն անդրադառնալով շրջանակման հնարի գեղարվեստական հայտնակերպման նմուշներին, հետևելով դրա զարգացման ընթացքին հնագույն ժամանակներից մեր օրերը, կատարելով պատմամշակութային շրջայց, դիտարկելով և համադրելով խնդրին վերաբերող տարաբնույթ տեսական ընդհանրացումներ՝ Ս. Ալավերդյանը որոշադրել է իր գիտական ըմբռնումը: Հեղինակը քաջատեղյակ է նյութին առնչվող տեսական մոտեցումներին, որն էլ նրան հնարավորություն է տվել առանձնաբար քննելու գրական այն երկերը, որոնք առնչվում են անհատական ու հավաքական ինքնության խնդիրներին: Այդ ստեղծագործությունների օրինակով բացահայտել է ինքնության որոնումները շրջանակման հնարով գեղարվեստորեն արտահայտելու հեղինակային ինքնատիպ մոտեցումները:

Ալավերդյանն իրավացիորեն նկատում է, որ շրջանակված պատումին բնորոշ պատկերակառույցների կիրառումը, սակայն, չի սահմանափակվում անհատական ինքնության որոնումներով, այլ օգտագործվում է նաև ազգային ինքնության վերակազմավորման խնդրի գեղարվեստական լուծումների համար: Այս դիտանկյունից ինքնատիպ շեշտադրումներ են ստանում շրջանակված կառույցի յուրօրինակ դրսևորումները: Նրա տեսադաշտում գլխավորապես Ժերար Ժենետի պատումային մակարդակների տեսությունն է: Հարցի վերաբերյալ ատենախոսի ըմբռնումը տեսանելիորեն ամբողջացել է ժամանակակից հայ արձակի նմուշների,

մասնավորապես՝ Պ. Զեյթունցյանի, Գ. Խանջյանի, Հ. Սարիբեկյանի, Լ. Խեչոյանի, Հ. Երանյանի, Վ. Գրիգորյանի երկերի քննությամբ:

Ս. Ալավերդյանն ուսումնասիրել է զգալի ծավալի և ընդգրկման գիտական-տեսական և գեղարվեստական նյութ՝ շրջանակման հնարը ներկայացնելով տարբեր կողմերից, կատարելով եզրույթի ծագմանն ու հասկացության սահմանումներին և ընկալումներին, ժանրային նկարագրին ու տիպային դասակարգմանը վերաբերող կարևոր շեշտադրումներ: Ուշագրավ է շրջանակված պատումի և հետմոդեռնիզմի առնչությունները պարզող իրողությունների քննությունը, որը հնարավոր է դարձել հայկական հետմոդեռնիստական գեղարվեստի ձևավորման պատմական, հասարակական-քաղաքական և գրական նախադրյալների դիտարկման, երևույթին ուղղված փիլիսոփայական և գոյաբանական հայեցակետերի ընտրության շնորհիվ: Ընդամին, ատենախոսի պատկերագծած քննաբանման շրջանակում առանձնանում և շեշտադրվում են համամարդկային և ազգային գոյաբանական խնդիրներ: Քննության առարկա են դառնում նաև այն «պոստմոդեռնիստական ռազմավարությունները», որոնց շնորհիվ, ըստ ատենախոսի, ապահովվում է շրջանակման հնարի կենսունակությունը արդի հայ արձակում: Ընտրված արժեքավոր նմուշների դիտարկմամբ Ալավերդյանը շոշափում է անհատական և հավաքական ինքնության հետ կապված արդիական խնդիրներ: Բնագրի գեղարվեստական նկարագրի վերհանման առումով գնահատելի են անհատական ինքնության որոնման և արտացոլման ինքնահատուկ ցուցիչ հանդիսացող հայելու և հայելակերպ այլ արտացոլիչների խորհրդապատկերային լուծումների նրբամիտ վերլուծությունը, ազգային ինքնության բեկորվածության գեղարվեստական արծարծումների տեսանումը: Առհասարակ, պատումնաբանական մեթոդի գերակայությամբ կատարված աշխատանքը հատկանշվում է մեթոդական արդյունավետ գործիքակազմով: Մասնավորաբար հետաքրքիր է ներանձնային դրամատիկ բախման երևույթի դիտարկումը հոգեվերլուծական մեթոդով, որը հնարավորություն է ընձեռել գեղարվեստական բնագրում տարբերակելու «գերԵս»-ի և «այն»-ի հակադիր պատկերային իրացումներ, ես-ուրիշ հակոտնյա եզրերի դրսևորումներ, «ես»-ի ամբողջական ճանաչմանը ծառայող կերտումներ:

Ատենախոսին ընդհանուր առմամբ հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները՝ իր մեկնաբանական վարկածի հիմնավորման ընթացքում

տարժամանակյա կառուցողական բանավեճի մեջ մտնելով խորամիտ հետազոտողների հետ, որոնց շարքում նշելի են Յու. Լոտմանի, Մ.- Լ. Ռայանի, Վ. Շկլովսկու անունները: Աշխատանքի վերջում համակարգվել են հետազոտության արդյունքում կատարված հետաքրքիր եզրահանգումները:

Ընդհանուր առմամբ հաջողված ուսումնասիրության մեջ նկատվում են հետևյալ թերությունները.

1. Աշխատանքում տեսական գրականության գերհագեցվածությունը հաճախ ստվերում է թողնում հեղինակի ինքնուրույն վերլուծական խոսքը: Առաջին գլխում՝ շրջանակման հնարի ներկայացման պատմամշակութային շրջայցի հատվածամասում, նկատվում է որոշակի ձգձգվածություն, բերվող օրինակների կուտակում. դրանց փոխարեն կարելի էր ծավալել հայ արձակի նմուշների քննությանը նվիրված հատվածները: Առավել հետաքրքիր կլիներ, եթե ժամանակակից գրողների ուսումնասիրությունը կատարվեր հայ գրական ավանդույթի համատեքստում:

2. Ատենախոսության հեղինակը, քննելով խեչոյանական պատումին ներհատուկ դիալեկտիկական՝ թեզ-հակաթեզ սկզբունքը, անդրադառնալով դիպաշարային այս կամ այն դրվագի պատճառների մեկնաբանման հակադիր տեսակետներին կամ փաստարկներին, այդ երևույթը կապում է տեքստի վերաիմաստավորման և վերագնահատման նպատակով արվող հետմոդեռնիստական պարողիական մեկնակերպի հետ (էջ 128-129): Պետք է անհրաժեշտաբար նշել, որ միննույն իրողության՝ իրար հակասող ու հակադրվող տարակերպ մեկնաբանությունների բազմազանությունը՝ առանց դրանցից որևէ մեկին առաջնահերթություն տալու, հետկառուցվածքաբանական ռիզոմատիկ («փնջաձև») կառույցի դրսևորում է՝ ի հակադրություն մտածողության գծային և առանցքային կառուցվածքների, կառուցվածքաբանական «ծառի»: Խեչոյանական պատումը վիպական որոշ դրվագներում հետմոդեռնիստական «շիզոֆրենիկ» պատումի նմուշ է՝ ի հակադրություն մոդեռնիստական «պարանոիկ» պատումների: Դասախոսի կերպարը հատկանշվում է հետմոդեռնիստական, հետկառուցվածքաբանական ընկալման հենց այդպիսի նկարագրով: Կարծում ենք՝ գեղարվեստական իրողության ըմբռնման նշված նրբիմաստի դիտարկումը առավել կուտ կդարձներ ատենախոսի մեկնաբանական վարկածի գիտական հիմնավորումը:



3. Անդրադառնալով դասախոսի հիշատակած քարտեզին՝ «Մեերի օղակաձև պտույտներն արտացոլող», խոսելով Մեերի «ի շրջանս յուր ճամփեքով քայլելու մասին» Ալավերդյանը դա համարում է «նրա՝ տարածաժամանակի տարբեր փուլերի ոչ թե գծային, այլ օղակաձև շարժման ընկալման» դրսևորում (էջ 131): Հետմոդեռնիստական գրականությանը բնորոշ գծեր ունեցող այս վեպում նկատվածը տարածաժամանակային փակուղու, թակարդի դրսևորում է նաև, լաբիրինթոսի գեղարվեստական ներկայություն: Ի դեպ, ատենախոսը Հր. Սարիբեկյանի վեպի կապակցությամբ անդրադառնում է հայելիներով և հայելանման արտացոլիչներով հորինվող լաբիրինթոսի գեղարվեստական պատկերին (էջ 102-103):

4. Ատենախոսության ցանկում տեղ է գտել մեկ վրիպում. բացակայում է «Եզրակացություններ, էջ 183» նշումը:

Այնուամենայնիվ, ուսումնասիրությունն ունի տեսական և գործնական որոշ նշանակություն, լայնացնում է արդի հայ գրականագիտության պատումնաբանական ուսումնասիրությունների շրջածիրը, ուստի և կարելի է երաշխավորել պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ - Սոնա Կամոյի Ալավերդյանի ««Շրջանակված արձակ» (frame story) հասկացությունը և նրա դրսևորումները ժամանակակից հայ արձակում (1985-2020 թթ.)» ուսումնասիրությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, ուստի և այն կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Հայ նորագույն գրականության պատմության

և գրաքննադատության ամբիոնի վարիչ՝

Նիստի քարտուղար՝

Ամբիոնի վարիչի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՂԶ գիտքարտուղար՝

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ն. ԻՍԱՀԱԿՅԱՆ

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

03.10.25թ.